ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի
Հ. 387-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու և փոխանակելու մասին» հ.387-Ա որոշման հավելվածի 10-րդ կետի 4-րդ այունակում «Սիսակյան փողոց հ.22, բն.126» բառերը փոխարինել «Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.11» բառերով, 10-րդ կետի 5-րդ այունակում «3» թիվը՝ «2» թվով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի
Հ.387-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան է դիմել Արմիկ Հակոբջանյանը՝ Երևան քաղաքի ավագանու 08.10.2015թ. հ.387-Ա որոշմամբ իր ընտանիքին հատկացված Սիսակյան փողոցի հ.22 շենքի 14-րդ հարկում գտնվող հ.126 երեք սենյականոց բնակարանի փոխարեն 1-5-րդ հարկերում այլ բնակարան հատկացնելու խնդրանքով՝ նշելով, որ առողջական խնդիրների պատճառով /արյան բարձր ճնշում/ չի կարողանում բնակվել իր ընտանիքին հատկացված նշված բնակարանում:

Քաղաքացի Արմիկ Հակոբջանյանը հանդիսանում է զինծառայող՝ 1932 թվականին ծնված Սպարտակ Աշոտի Հակոբջանյանի կինը:

Վերջինս 1995 թվականի հունվարի 14-ին զոհվել է Մարտակերտի շրջանում մարտական գործողությունների ժամանակ: Քաղաքացի Արմիկ Հակոբջանյանը իր երկու տղայի և հարսի հետ վարձակալական հիմունքներով բնակվում է Անդրանիկի փողոցի հ.10 շենքի հ.44 բնակարանում:

Արմիկ Հակոբջանյանի ընտանիքը, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում բնակարանային պայմանների բարելավման նպատակով 2010 թվականին վերցվել է հաշվառման և Երևան քաղաքի ավագանու 08.10.2015թ. հ.387-Ա որոշմամբ Արմիկ Հակոբջանյանի ընտանիքին հատկացվել է Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.126 երեք սենյականոց բնակարանը:

Ներկայումս հաշվի առնելով Ա.Հակոբջանյանի խնդրանքը և առողջական խնդիրները, առաջարկվում է Սիսակյան փողոցի հ.22 շենքի 14-րդ հարկի հ.126 երեք սենյականոց բնակարանի փոխարեն տրամադրել Մարգարյան փողոցի հ.45 շենքի 3-րդ հարկի հ.11՝ երկու սենյականոց բնակարանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի Հ. 387-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 8-ի հ.387-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի Հ.387-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 8-ի հ.387-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ